

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2017 ԹՎԱԿԱՆԻ N ----- Ա

ԴԱՎԻԹ ՔՈԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԶՈՐԱԿՈԶԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1394 -Ն որոշման համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Դավիթ Վաչիկի Քոչարյանին (ծնված 1995թ. հոկտեմբերի 22-ին, բնակության վայրը՝ ք. Երևան, Շերամի փ., 61 շ., բն. 32, 2017 թվականին ընդունվել է Ֆրանսիայի Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի մագիստրատուրա՝ <<Տեղեկատվական համակարգերի կառավարում>> մասնագիտությամբ) պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տալ տարկետում մինչև ուսումնառության ավարտը՝ 2019 թվականի ծմեռային զորակոչ:

2. Ընդունել ի գիտություն, որ Դավիթ Քոչարյանը ներկայացրել է նոտարական կարգով հաստատված հայտարարություն, որի համաձայն պարտավորվել է ուսումնառության ավարտելուց հետո վերադառնալ Հայաստանի Հանրապետություն և 2 տարի աշխատել իր մասնագիտությամբ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության միջնորդությամբ՝ նրա կողմից առաջարկվող վայրում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում գրավի պայմանագրի նոտարական վավերացման, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ գրավի իրավունքի պետական գրանցման պահից:

1. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Դավիթ Վաչիկի Քոչարյանը /ծնված 1995թ. հոկտեմբերի 22-ին, բնակության վայրը՝ ք. Երևան, Շերամի փ., 61 շ., բն. 32/ 2017 թվականին, ավարտելով Հայաստանում ֆրանսիական համալսարանը՝ ընդունվել է Ֆրանսիայի Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի Ձեռնարկությունների կառավարման ինստիտուտի մագիստրատուրա՝ տեղեկատվական համակարգերի կառավարում մասնագիտությամբ, որն ավարտելու է 2019 թվականի սեպտեմբերի 30-ին: Մագիստրոսական ծրագիրը բաղկացած է 2 փուլից՝ մագիստրատուրա-1 և մագիստրատուրա-2՝ համաձայն Ֆրանսիայի կրթության օրենսգրքի 612-6-1 հոդվածի:

Բուհն ընդգրկված է ՀՀ կառավարության 2002 թ. օգոստոսի 29-ի N 1394-Ն որոշմամբ սահմանված՝ օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկում:

Դ. Քոչարյանը դիմել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ խնդրելով ՀՀ կառավարության 2002 թ. օգոստոսի 29-ի N 1394-Ն որոշման համաձայն տալ տարկետում մինչև ուսումնառության ավարտը՝ 2019 թվականի սեպտեմբերի 30-ը:

2. Անհրաժեշտությունը

Որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ Դ. Քոչարյանին հնարավորություն կընձեռվի ավարտելու ուսումնառությունը, այնուհետև՝ ներկայանալու զինվորական ծառայության:

Վերոշարադրյալից ելնելով՝ նպատակահարմար է Դավիթ Վաչիկի Քոչարյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տալ տարկետում մինչև ուսումնառության ավարտը:

3. Ակնկալվող արդյունքը

Որոշման նախագծի ընդունումը Դ. Քոչարյանին հնարավորություն կընձեռի ավարտելու կրթությունը, որից հետո նա կկարողանա ստացած գիտելիքները ներդնել Հայաստանի Հանրապետությունում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<Դավիթ Քոչարյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը այլ օրենքներում և այլ իրավական ակտերում փոփոխություններ չի առաջացնի:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<Դավիթ Քոչարյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջացնի:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<Դավիթ Քոչարյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ Նախագահի աշխատակազմի, ՀՀ պաշտպանության և ՀՀ արդարադատության նախարարությունների կողմից արված դիտողությունների և առաջարկությունների մասին

| Նախարարության անվանումը | Դիտողություններ և առաջարկություններ | Նշումներ կապարման վերաբերյալ |
|-----------------------------------|--|-------------------------------------|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | Դիտողություններ և առաջարկություններ չկան: | |
| ՀՀ արդարադատության նախարարություն | Դիտողություններ և առաջարկություններ չկան: | |
| ՀՀ Նախագահի աշխատակազմ | Դիտողություններ և առաջարկություններ չկան: | |